



163. ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐ

Մին քաշալ, մինգյել մին քոսակ ախպըր ըն ինձնմ: Տահանք շատ քյանսիր ըն ապրում: Մոլըհաթ ըն անում, վըեր ախպորցը մինը տանը կենա, էն մինը քյինա օրիշ տըեղ ծառայություն անե, փող ըխշադի: Թոսակը տանը կենում ա, քաշալը քյինամ ա կոխկե շենին մին հարուստ մարթու քշտի նորդյուրոթուն անում: Հենց սուրթա օրը էտ հարուստը պայման ա տինձնմ, ասում ա.—Թեզ մին ճոխտ կյումաշ, մին կըեռ, մին էշ, մինգյել մին թազի յըմ տամ: Սաղ օրը թազին հիշքան տըեղ վազ տուվավ, էնքան տըեղը պիտի վարես, ուրդնոյժնն էլ էշը պիտի թամուզ, ծրտու շտըեռած փաղավ պեռնես, պիրիս տոն: Տու մի ասիլ, էտ երգիբռումն էլ շատ զուշեր կան, ծմբկներեն ան հինդերեն ծառերը լոխ ծրտու ըրած: Տըեղ թամուզ փադ քթենվալ լի: Էրկուինչի պայմանն էլ էն ա, վըեր տոն քյինալան ետը կյումումը կապած կյումըշներեն էնքան տերման պիտի տա, վըեր կլիսընեն տիրմանավ ծասկվեն: Էտ քաշալը կյումուշնեն, կըեռը, թազին ան էշը յոր ա օնում, քյինամ հանդ: Կյումշնեն լծում ա, ըսկսում վար անելը, թազին էլ սաղ օրը էն հինդերեն վազ-վազ ա անում, սաղ օրը վարում ա, վարում, թազուն վազ տված տըեղերը կարում լի հսցընե: Ուրդնոյժնն էլ շոռ ա կյամ, վըեր թամուզ, ծրտու շտըեռած փադ քթենա, կտորե, էշին պեռնե պիրի տոն, կարում լի: Էշն առաջն ա քցում, տերտակ

պիրում տոն, մինչդեկ քյինամ, թա կյումուշներին տերման տա:
Տերմանը ճումլըրանավը ածում ա ախուռը, կյումըշներին կլիշնեն
ծասկում, տահանք պուղպատոկ ըն անում, կլիշնեն տական տինա
օնում: Մինչև կես քիշեր տա տերմանն ածում ա, ածում, կարում
չի կյումուշներին կլիշնեն ծասկե: Կղնված, տըեղ էլ պրանվում
ա, քունավ հնցընում: Էքյսն էտ քաշալը քյինամ ա խազայինին
կոշտը, թա պայմանը կարում ըրմ կատարեմ, ես քյինամ ըմ
մըրեր տոն: Խազայինը թա՝ քյինա: Տա քյինամ ա քոսակ ախապորը
կրլիխը եկածը նազ անում: Քոսակը թա դե մեհենգի տու տանը
կաց, մինգյել ես ըմ քյինամ: Տա քըշալեն թողում ա տանը, քյի-
նամ համան հըրուատեն կոշտը: Էտ հարուատը տրան ննջանը ա
յոր օնում, էլլա էն էրկու պայմանը տինում ըրաշին: Էքյսը քոսա-
կը կյումուշնեն, կեռը, թազին ան էշը յոր ա օնում քյինամ հանդ,
պրանվում, մինչև ուրուզյունը քոն ինում, եր կենում լուծն ան
սըմենեն կտորում, էշին պեմում, տանում տոն: Խազայինը վըեր
հըրընում ա, ասում՝ ա՛ տափը մտած, էտ հինչ ը՛ս ըրալ, տա թա՝
դե հինչ ա՞նեմ, հիշքան շոռ եկե, թամէնզ, ծրտոտ շտըեռած փադ
շիլավ, մենակ սա յար, Խազայինն էլ կարում չի խոսե: Մինցյել
քյինամ ա, վըեր էրկուինչի պայմանը կատարե: Տերմանն ածում
ա ախուռը, կյումուշներին կլիշնեն կտորում ըխուսումը թազում,
տիրմանավ ծասկում: Տարը վըեր կյամ ա տի տըեսնում, խրեգի ա
մեամ թա կյիժմի, վըեր յիրան յա պրծնում, հրցնում թա էտ հինչ
ըս ըրալ, տա թա՝ հիշքան տերմանն ածում ի, կլիշնեն ծասկում,
էլլա պըղըպտոկ ին անում, կլիշնեն տական տուա օնում, տու վել
ասալ ըս էնքան տերման տո, վըեր կլիշնեն ծասկես, ես էլ ծրս-
կեցե: Խազայինը տեսնում ա, վըեր տա հալա շատ օյիննե պիտի
ուրան կլիսեն խաղ անե, օգում ա մին մհանա քթենա, վըեր տը-
րանա ըզադվե: Քյինամ ա պելուն կոշտը, վըեր տրա հետե մոլ-
հաթ անե, քոսակեն էլ ասում, վըեր տանը կենա, տոռնը պեց չի
թողե, քիշերն կեսեն էլ ճիրաքյավ քյինամ ուրանց տանե տոն:
Տահանք մրթէկնեգի վըեր քյինամ ըն պելուն տոն, քշերն կեսին
քոսակը տանը տոռնը կուրումգիշան ա անում, պուկում, ճիրաթը
ծըեռքն օնում, տոռնը. շիլակում, քյինամ տահանց հետան: Էտ
վըեր տի տըեսնում ըն, լափ ըն պըլանում: Պելին ասում ա.—էլ
տրանա պրծնելի թահըր չի կա, տոն-տըեղ թուղեցերը, կլնին եր
կալիթյ, փախեթյ, վըեր սաղ էլ պրծնեթյ, լավ ա: Տահանք տոն-
տըեղը թողում ըն, փախնում, քոսակն էլ հըտըրներան: Հանում ըն
ծովեն կոխկեն մին պեցնիր թումբ, տըեղ օրան վըեր թողում,

նստուտում, վըեր գինչանան: Հաց ըն օտում, դինշանում, առզըրնեն քցում, վըեր քոն ինին: Թիշերեն կեսին մըրթըկնեզ մալրհաթը ըն անում, վըեր տրան քցին ծովը, քոսակը տապուռ ըրած ա ինքնմ, սուտըսուտ քոն իլած, ըսկանում ա, հենց վըեր մարթը քունավ ա հնցընում, եր ա կենում կնդանը նհետ խաղայինին քցում ծովը, կնդանը ըսպանում, մարթին ճիրան տուս օնում, ծիյան կապում, կոխսկե արտին մաշին պեց թողում: Ըրտատարը կյամ ա հըոցանա նղնջամ, ծեն տամ, թա՝ ա՛ ծիյավուր, էտ ժին խե լը՝ ս արտը ըրըծցնում: «Սիյավուրը խոսում չի, նորից ա ծեն տամ, թա՝ ա՛ քնծահար, քյնըհետ լը՝ մ, հալա որիսետ լայազ օզում էլ լը՝ ս ջողաբըս տաս: Տեսնում ա, վըեր ծիյավուրը ուրան մըթատընը շի տինում, էտ ըրտատարը մին մըհեծ փայա ծըեռքեն կյամ ա տրա կլիսն թխում, քցում ծիյին տակը: Թոսակը կյողլը կացած տըեղան տուս ա կյամ, թա վա՛յ, ախապորըս ըսպընեցեն: Էտ ըրտատարին ան հիրան պարիկամնեն կյամ ըն քուսակին խաթիրը թթենում, թա՝ գե լավ, գյիղանցալ լընք, արտը ըրըծելիս ա իլալ, կզնված մարթ ա, թխալ ա, գյիղանցալ չի, թա ար կըտըեռնա: Պիրում ըն էտ քուսակին մին քանի ծիյապեռնը ցորեն տամ, հիշտըցնում: Թոսակն էլ պիրում ա էտ ցորենը, խաղայինին իլրծ-լիլած վըեսկեն ան փողերը, սաղ հարստությունը տահանց պեռնել տամ, քյինամ խաղայինին տանը իլրծ-շիլածն էլ հըվաքում, քշնմ թուշ ուրանց տոն, քաշալը ախապորը թա՝ հասե՛, խստի լըն ժառայություն անում, փող ըխշաղում:

